ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի թիվ 52(Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 18) կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7, 8, 9, 10, 11 հոդվածներով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2017 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2017 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4-ի:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.

2. ԲԱԲԱՅԱՆ Հ.

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.

5. ԶԱՔԱՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

7. ԽՈՍՐՈՎՅԱՆ Գ.

8. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Հ.

9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

11. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

13. ՍԱՖՐԱԶՅԱՆ Ս.

14. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

15. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար **Ա. Սարգսյան**

2016թ. նոյեմբերի 28
ք.Սիսիան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 28-ի թիվ 52(Ն) որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում է տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.
2. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար.
3. համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.
4. համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար.
5. համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
6. համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար.
7. համայնքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.
8. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար.
9. համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
10. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար.
11. համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
12. համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
13. համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
14. համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար.
15. համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար.
16. համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար **Վ. Միրաբյան**

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ.նոյեմբերի 28-ի թիվ 52(Ն) որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.
2) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
   ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.
   բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.
   գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.
   դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի «1.» կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ

շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 15000դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 35000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 55000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 35000դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 55000դրամ:

5. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է տարեկան 65000դրամ:

6. Համայնքի տարածքում

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 250 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 300000 հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական

հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 45000 դրամ.

4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

<u>հիմնական շինությունների ներսում՝</u>

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 17000 դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 35000 դրամ.

<u>ոչ հիմնական շինությունների ներսում՝</u>

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 10000դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   1) առևտրի օբյեկտների համար՝ 25000դրամ.
   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000դրամ
   3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000դրամ.
   4) խաղատների կազմակերպման համար՝ 500000դրամ.
   5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000դրամ.
   6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000դրամ.
8. Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 2000դրամ:
9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
   1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000դրամ.
   2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 5250դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500դրամ.
4) Սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1քմ դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝ 375դրամ.
11. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքային բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ 150դրամ այդ գովազդի մակերեսին համապատասխան:
12. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 3000դրամ:
13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000դրամ:
14. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 15000դրամ:
15. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000դրամ:
16. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝
ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.
բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ.
գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ.
դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ **Վ. Միրաբյան**

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 28-ի թիվ 52(Ն) որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ.
2. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.
4. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար.
5. շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ **Վ. Միրաբյան**

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 28-ի թիվ 52(Ն) որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 20000դրամ:
2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 52000դրամ:
3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանվում է՝ մասնակիցներից վճար 3000դրամ:
4. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու և իրականացնելու համար աղբահանության վճար սահմանվում է՝
   1) կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 170դրամ.
   2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000դրամ:
5. Համայնքի տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500դրամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ **Վ. Միրաբյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի թիվ 54(Ա)

«ՍԻՍԻԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 15) կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածու Գարեգին Շուրիկի Բաղդասարյանի նշանակմանը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.
2. ԲԱԲԱՅԱՆ Հ.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
5. ՋԱՔԱՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽՈՍՐՈՎՅԱՆ Գ.
8. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Հ.

9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

11. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

13. ՍԱՖՐԱԶՅԱՆ Ս.

14. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

15. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար **Ա. Սարգսյան**

2016թ. նոյեմբերի 28
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի թիվ 55(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 83(Ա) ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի ա) և բ) ենթակետերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին» թիվ 83(Ա) որոշումը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.
2. ԲԱԲԱՅԱՆ Հ.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
5. ՋԱՔԱՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽՈՍՐՈՎՅԱՆ Գ.
8. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Հ.

9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

11. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

13. ՍԱՖՐԱԶՅԱՆ Ս.

14. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

15. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2016թ. նոյեմբերի 28
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի թիվ 56(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի 3-րդ մասի ու «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածի, համայնքի ավագանու կանոնակարգին համապատասխան ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ստեղծել կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի Սիսիանի համայնքի ավագանու մշտական հանձնաժողով և հաստատել անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ստեղծել ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի Սիսիանի համայնքի ավագանու մշտական հանձնաժողով և հաստատել անհատական կազմը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ստեղծել իրավական և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի ու արտաքին կապերի Սիսիանի համայնքի ավագանու մշտական հանձնաժողով և հաստատել անհատական կազմը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.
2. ԲԱԲԱՅԱՆ Հ.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.

5. ՋԱՔԱՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

7. ԽՈՍՐՈՎՅԱՆ Գ.

8. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Հ.

9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

11. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

13. ՍԱՖՐԱԶՅԱՆ Ս.

14. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

15. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար **Ա. Սարգսյան**

2016թ. նոյեմբերի 28
ք.Սիսիան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 28-ի թիվ 56(Ա) որոշման

ԿԱԶՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ. ՄՇԱԿՈՒՅԹԻ. ՍՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սուրեն Վարդանյան - համայնքի ավագանու անդամ,
2. Գագիկ Խոսրովյան - համայնքի ավագանու անդամ,
3. Բագրատունի Ստեփանյան - համայնքի ավագանու անդամ,
4. Նաիրա Ներսիսյան - համայնքի ավագանու անդամ,
5. Դավիթ Համբարձումյան - համայնքի ավագանու անդամ,
6. Արա Խաչատրյան - համայնքի ավագանու անդամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Վ. Միրաբյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 28-ի թիվ 56(Ա) որոշման

ԿԱԶՄ

ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Համլետ Բաբայան - համայնքի ավագանու անդամ,
2. Հովսեփ Առաքելյան - համայնքի ավագանու անդամ,
3. Սպարտակ Սաֆրազյան - համայնքի ավագանու անդամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Վ. Միրաբյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 28-ի թիվ 56(Ա) որոշման

ԿԱԶՄ

ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Արա Զաքարյան - համայնքի ավագանու անդամ,
2. Արման Գրիգորյան - համայնքի ավագանու անդամ,
3. Հարություն Հայրապետյան - համայնքի ավագանու անդամ,
4. Արմեն Հարությունյան - համայնքի ավագանու անդամ:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Միրաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի թիվ 57(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 85(Ա) ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի ա) ենթակետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմերի մասին» թիվ 85(Ա) որոշումը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.
2. ԲԱԲԱՅԱՆ Հ.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
5. ՁԱՔԱՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽՈՍՐՈՎՅԱՆ Գ.
8. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Հ.

9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

11. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

13. ՍԱՖՐԱԶՅԱՆ Ս.

14. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

15. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2016թ. նոյեմբերի 28
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի թիվ 58(Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34) կետով և 54.1 հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի ա) և բ) ենթակետերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները և ձևավորման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների գործունեության կարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքապետին կից, քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների մասին» թիվ 16(Ն) որոշումը:

4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.
2. ԲԱԲԱՅԱՆ Հ.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
5. ՋԱՔԱՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽՈՍՐՈՎՅԱՆ Գ.
8. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Հ.
9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
11. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
12. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.
13. ՍԱՖՐԱԶՅԱՆ Ս.
14. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.
15. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2016թ. նոյեմբերի 28
ք.Սիսիան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 28-ի թիվ 58(Ն) որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով Սիսիանի համայնքի ղեկավարին կից ստեղծվում և գործում են խորհրդակցական մարմիններ (այսուհետ՝ Խորհուրդ):
2. Սիսիանի համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են հետևյալ երեք Խորհուրդները.
   1) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և ֆինանսների,
   2) քաղաքաշինական, կոմունալ տնտեսության, հողօգտագործման, գյուղատնտեսական, բնապահպանական և տրանսպորտի,
   3) առողջապահության, սոցիալական, սպորտի, մշակույթի և կրթության, երիտասարդության հարցերի:
3. Յուրաքանչյուր Խորհուրդ ձևավորվում է 9 անդամից:
4. Խորհրդի անդամներին իր որոշմամբ նշանակում է Սիսիանի համայնքի ղեկավարը՝ աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ): Խորհրդի կազմում ներգրավում են.
   1) Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմից 3 անդամ,
   2) համայնքի ավագանիներից՝ 2 անդամ,
   3) 1 փորձագետ՝ տվյալ բնագավառի մասնագիտական գիտելիքներ և բարձր որակավորում ունեցող, ցանկալի է հայտնի ու հեղինակություն վայելող այն անձանցից, որոնք չեն աշխատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ դրանց ենթակայության կազմակերպություններում և նախապես հայտնել են իրենց համաձայնությունը:
5. Հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ 3 անձանց նշանակումը Խորհրդի կազմում կատարվում է իրենց դիմումի համաձայն՝ հրապարակային հայտարարության հիման վրա, ըստ հայտերի ներկայացման հաջորդականության՝ մինչև սույն կարգով սահմանված անդամների առավելագույն քանակը լրանալը:
6. Խորհուրդը ձևավորված է համարվում, եթե նշանակվել են տվյալ Խորհրդի առնվազն 6 անդամ:

Աշխատակազմի քարտուղար՝ **Վ. Միրաբյան**

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 28-ի թիվ 58(Ն) որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինը (այսուհետ՝ Խորհուրդ) իր գործունեությունն իրականացնում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կարգի հիման վրա:
2. Խորհրդի խնդիրներն են.
   1) համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների ներգրավմամբ տվյալ ոլորտում հանրային կարևորության խնդիրների վերհանումը, դրանց վերաբերյալ կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը Սիսիանի համայնքի ղեկավարին,
   2) համայնքի բնակիչների, քաղաքացիների, հասարական կազմակերպությունների, միավորումների առաջարկությունների ուսումնասիրումը, քննարկումը և դրանց վերլուծության հիման վրա կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը Սիսիանի համայնքի ղեկավարին,
   3) տվյալ ոլորտի կառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը:
3. Խորհրդի աշխատանքները իրականացվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են Խորհրդի նախագահի կողմից:
4. Խորհուրդը նախագահում է Սիսիանի համայնքի ղեկավարը, որի առաջարկությամբ Խորհրդի կազմից ընտրվում է Խորհրդի նախագահի տեղակալ ու քարտուղար՝ ձայների պարզ մեծամասնությամբ, որոնք կարող են լինել համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:
5. Խորհուրդն իր նիստերը կազմակերպում է Սիսիանի համայնքապետարանի շենքում, Սիսական 31 հասցեում:
6. Խորհրդի անդամների համաձայնությամբ Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև այլ անձինք (հրավիրվածներ), ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:
7. Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է Սիսիանի համայնքի ղեկավարը:
8. Խորհրդի նախագահը՝
   1) հաստատում է Խորհրդի նիստի օրակարգը,
   2) հրավիրում է Խորհրդի նիստերը,
   3) կազմակերպում է Խորհրդի գործունեությունը և ղեկավարում դրա աշխատանքը,
   4) ստորագրում է Խորհրդի նիստի արձանագրությունը:
9. Խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է Խորհրդի նախագահին նրա բացակայության ժամանակ:
10. Խորհրդի քարտուղարը՝
    1) կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում Խորհրդի նախագահի հաստատմանը,

2) իրականացնում է նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի նախապատրաստումը և նիստից երկու աշխատանքային օր առաջ դրանք տրամադրում է Խորհրդի անդամներին ու ապահովում է մասնակիցների ներկայությունը,
3) պատասխանատվություն է կրում ներկայացվող նյութերի ամբողջականության համար,
4) վարում է Խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը:

11. Խորհրդի անդամը նախագահողի կողմից կարող է հեռացվել խորհրդի տվյալ նիստից խորհրդի նիստի աշխատանքներին խոչընդոտելու դեպքում, մասնավորապես եթե.
1) թույլ չի տալիս կամ խոչընդոտում է Խորհրդի մյուս անդամներին ազատորեն արտահայտել իրենց կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ,
2) առանց ձայնի իրավունք ստանալու արտահայտում է իր կարծիքը կամ խոչընդոտում է նիստի աշխատանքին:

12. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:
13. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են նշանակված անդամների առնվազն կեսը:
14. Խորհրդի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և առաջարկությունների ձևով և կրում են խորհրդատվական բնույթ:
15. Խորհրդի անդամներն անձամբ մասնակցում են Խորհրդի նիստերին:
16. Խորհուրդն՝ ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է ընդունում բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելիի կողմից ընդունվելու դեպքում:
17. Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի օրակարգ մտցնել լրացուցիչ հարցեր, եթե դրանք ընդունվում են քվեարկությամբ՝ տվյալ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
18. Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Սիսիանի պաշտոնական համացանցային կայքում:
19. Խորհրդի անդամ կարող է լինել համայնքի բնակիչ համարվող 16 տարին լրացած յուրաքանչյուր անձ:
20. Խորհրդի անդամ չեն կարող լինել՝
1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
2) հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

21. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են տվյալ անձին համապատասխան Խորհրդի կազմից հանելու մասին Սիսիանի համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե Խորհրդի անդամը՝
1) դիմում է ներկայացրել Խորհրդից դուրս գալու վերաբերյալ,
2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
3) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի նիստերի աշխատանքին,
4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել նրա լիազորությունների իրականացմանը Խորհրդում,
5) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,
6) նա մահացել է,
7) անձը դադարել է ավագանու անդամ լինելուց:

Աշխատակազմի քարտուղար՝ **Վ. Միրաբյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի թիվ 59(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ԹԻՎ 34(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով և 70 հոդվածի 5-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի հանրակրթական դպրոցների խորհուրդների կազմում թեկնածուներ առաջադրելու մասին» թիվ 34(Ա) որոշման մեջ կատարել փոփոխություններ և որոշման 1 կետի 1)-ին ենթակետի «Նատալյա Արտուշի Հարությունյան» բառերը փոխարինել «Սոնա Կամոյի Խաչատյան» բառերով, 2)-րդ ենթակետի «Քնարիկ Ռազմիկի Շահգալդյան» բառերը փոխարինել «Միեր Սլավիկի Ալավերդյան» բառերով, 4)-րդ ենթակետի «Սլավիկ Անդրանիկի Դադաշյան» բառերը փոխարինել «Վարդան Սևադայի Իվանյան» բառերով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.
2. ԲԱԲԱՅԱՆ Հ.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
5. ԶԱՔԱՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

7. ԽՈՍՐՈՎՅԱՆ Գ.

8. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Հ.

9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

11. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

13. ՍԱՖՐԱԶՅԱՆ Ս.

14. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

15. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2016թ. նոյեմբերի 28
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի թիվ 60(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 4)-րդ և 7)-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 34 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2016 թվականի բյուջեի կատարման վերահսկողություն իրականացնել աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.
2. ԲԱԲԱՅԱՆ Հ.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
5. ՋԱՔԱՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽՈՍՐՈՎՅԱՆ Գ.
8. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Հ.
9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

11. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

13. ՍԱՖՐԱԶՅԱՆ Ս.

14. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

15. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար **Ա. Սարգսյան**

2016թ. նոյեմբերի 28
ք.Սիսիան